

2764

С. 1931/14

ՍՈՑԴԱՄՎԴԻՆԱԳՐԱԹՅՈՒՆ

Խ. ԴԵԼԻԳԵՆԱԿԱՅԱ
И Н С Т И Т У Т
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
С С С Р

Ա Հ Ա Յ Ա Ն Հ Ո Վ Ի Վ
ԿԱՐՄՇԱԿԱ

Թարգմ. ՍԻՄՈԿ

—

Փետրվար, ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ.— ԵԵԲԵՎ.Ա.Ն. 1930

891-715

Դ-31

C. 1931/14

ՀԱ
ՀԱՅԻ

891.714

Դ-31

ՍՈՅԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ

Ն. ԴԵԼԻԳԵՆԱԿՅԱՆ

ՎԻՃՈՒՅԻ
ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академия Наук
СССР

ԱԼԱՅԱՆ ՀՈՎԻԿ
ԿԱՐՄՇԱԿԸ

Թարգմ. ՄԻՄԱԿ

42-28392

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ.— ԵԵՐԵՎԱՆ, 1930

02 MAR 2013

3127

- 6 NOV 2011



60635-67

Հ. Ն 1343. Գրառեպիլար Ն 5239 (բ). Տիրաժ 3000

Գետհրատի տուաջին տպարան Գաղարշապատում:
Գատվեր Ն 101.

Ա.Ա.ՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐՄՐԵԱԿԲ

Պատուած չապակի (կապերտ) տակ Կարմշակը դոգդողում եր: Ցուրտ, ախ ինչպես ցուրտ ե առավոտյան, ուրթում (վաչկատուն ժողովրդի բնակարան): Նույնիսկ այնպիսին հարուստ ու ուժեղ բայի ուրթում, ինչպիսին հաջի Քելթն ե: Ճիշտ ե, Կարմշակը քնում ե հենց մուտքի մոտ. Ալայան լեռների ցուրտ քամին ազատ փչում ե կոմշաների (թաղիք) արանքների միջով: Լավ կլիներ, յեթե նա կարողանար պառկել այնտեղ, տաք պատի տակ, ոջախին ավելի մոտ, բամբակե վերմակի տակ, բրդե կոմշայի վրա: Բայց Կարմշակը վերմակ չունի, իսկ նրա տակի կոմշան հին ե, մաշված, պատուտված:

Կարմշակը չե վոր մի փոքրիկ բանվոր ե, հովիվ ու այն ել վորբ: Ամեն որ նա արածեցնում ե հաստ հաջիի վոչխարներն ու այծերը: Ուրթում դեռ մութն ե, բայց Կարմշակը կուչ գալով, լսում ե. ուրթի յետեն արդեն հաջում ելին սոված շները, փարախներում մայում ելին վոչխարները և բանվորների ավագը շարժվում եր

մուտքի մոտ։ Ժամանակն ե վեր կենալու և մի քանի գդալ սառը ալրաջուր—աթալա—ուտելուց հետո, հարլուրավոր վոչխարները պետք ե քշել սարերը՝ արածեցնելու։

Ալալան լեռները բարձր են ու ցուրտ։ Նըրանք իրենց ձյունապատ գազաթները բարձրացնում են Միջին Ասիայի հենց սրաի մեջ, լեռնային կիրգիզիայում։ Նրանից դեմք վերելքը շարունակ ավելի ուղղաձիգ ե, ճանապարհն ավելի դժվար։ Այդ ճանապարհը տանում ե գեղի մոաց լեռնային Պամիր յերկիրը։ Իսկ մյուս կողմն արդեն հեռու չե արևմտյան Զինաստանի սահմանը։

Այն լեռնային առւլը, ուր ապրում ե Կարմշակը, կպած ե ժայռերի միջի մի լեռնային նեղ անցքի մուտքի։ Կիրճը լցված ե ձյունով, նրա հատակով աղմուկով սրբնթաց թռչում է լեռնային սառը գետը—սառցապատ քարերի միջով։ Զյունով ծածկված, ութ հատ սրագագաթ թաղքը ուրթեր և մի քանի հատ շեկ, կավե մազանկաներ լեռան լանջն ի վեր կարծես մագլցում են։ Կավե, ցած ցանկապատով շրջապատված են այն փարախները, ուր գիշերում են անասունները.— վոչխարները, այծերը, փոքրիկ, սապատավոր ձիերը և յերկարավոր, զոտ ուղտերը։ Կարմշակի տանտերը, հարուստ, փորը դուրս ընկած բայլ

յանկա—յեզներ ել ունի, վորոնց կիրգիզերեն կուտաս են ասում։ Դրանք բրդոտ, յերկար, մազոտ պոչերով, սապատավոր կենդանիներ են։ Սարերի ծերպերում վոչ մի ձի չի կարող անցնել այն տեղերով, ուր անցնում—սողոսկում ե նա, թանգագին գանձը մեջըին։

Ամենամոտ քաղաքից այդ առևլը (նրանց բընակավայրը) գնալու համար, պետք ե ձիով յերեք որ ճանապարհ գնալ սարերի միջով։ իսկ Մոսկվայից հագարավոր վերստեր հեռու յեւ Բայց այդ բոլորը միենուն ե Կարմշակի համար։ Նա յերբեք չի յեղել քաղաքում։ իսկ թե ինչ բան և Մոսկվան—իսկի չգիտե։

Մի ժամից հետո Կարմշակը իր հոտն առած բարձրանում ե սարը։ Այնտեղ, վերեռում, յերկու լեռնային անցքերի միջև մի փոքրիկ հովիտ կա, ուր շատ քիչ ձյուն կա։ Նույնիսկ վոչխարի պառավ կճղակը այնտեղ հեշտությամբ կարող ե ձյունի տակ պահված բույսերի հութալի ընձյուղները բանալ, — վոր ձմեռվա կերն ե։

Կարմշակը նիհար ծնկներով ամուր կպել ե յերիտասարդ բրդոտ արջառ—կուտասի կողերին։ Նրա այս ձին դիմացկուն ե, արագաշարժ։

Կուտասի սանձը ծակած, մի վոսկրե ձող ե անցկացրած, իսկ այդ ձողից թոկ ե կապած։ Դա

կուտասի սանձն ե: Թողի ոգնությամբ Կարմշա-
կը շատ լավ դեկավարում ե իր ձին:

— ՀԵ՞, չո՞, —քարձր աղաղակում եր նա, աջ ձեռքով թափահարելով իր թողի սանձը, իսկ ձախով մի յերկար ճիպոտ: Պետք եր ուշադիր հետևել համար վոչխարներին: Ա՛յ, արդեն մի քանի հատ յետ են մնացել: — Չո՞ չո՞ —քառասմբակ քշում ե Կարմշակը և պտտում իր հոտի աջ թեր, մտրակով շփփայնելով անհնաղանդներին:

Սոված, բրդոտ գամփոր ջանասիրությամբ ոգնում ե նրան: Ջյունի ծածկոցի տակ մոռայէ կուչ են յեկել Ալայան լեռները: Կարմշակը իր մորթե գլխարկը քաշում ե շեղ աշբերին: Կուտասը աչքի սպիտակուցները բարկացած շուռ տալով, բարձրանում ե համարյա ուղղաձիգ լանջով:

Կարմշակը հովտումն ե: Ամբողջ հոտը հավաքվել ե մոտիկում և հանգիստ խոտ ե հանում ձյունի տակից:

Այստեղ լավ ե: Խիստ քամի չկա: Հովիտը պաշտպանող լեռան լանջերը խիտ ծածկված են ծուռ ու խլոտ արզայով (ցրտենու նման փոքրիկ ծառ):

Արդան պաշտպանում ե հովիտը ավելորդ ձնից: Կարմշակը տաքացավ ու հոգնեց կուտասն արագ քշելուց և վոչխարների համար շարչար-

գելուց: Նա իրեն համար հարմար տեղավորվում ե հին արզայի բնի տակ, իր գոտի-թաշկինակից հանում ե չոր զոռութի (վոչխարի պանիր) մի փոքրիկ կտոր: Ղոռութը ծամելով մեկ վոչխարներին ե նայում, մեկ սառն ու կարմիր արկին, ու սկսում ե ցնորքների մեջ ընկնել: Ե՞ս, գիտի հա: յավ ժամանակ եր, յերբ Կարմշակն ապրում եր իր հոր ու մոր հետ և վոչ թե այս անիծված բայի մոտ: Վոչ վոք չեր ծեծում, չեր հայնոլում. իրենց փոքրիկ ուրթն ունելին, տաք թաղիքները: Թեև նրա հանգուցյալ հորը չքավոր ելին համարում, բայց նա հինգ վոչխար, հինգ այծ, մի մատակ ու քուռակ ուներ: Լավ եր Կարմշակի համար: Մայրն ամեն ամառ նրա համար նոր շոր եր կարում, ու յերբ կումիս եր պատրաստում, ամենից շատ Կարմշակին եր տալիս: Նույնիսկ գարու բիլիթներ ելին թխում: Իսկ ձին, ինչպես մեծացավ: Խիտ բաշ ուներ ու կրակե աշբեր: Կարմշակը արագ սլանում եր նրան հեծած:

Հայրն ասում եր. — Ձին ել կմեծանա, Կարմշակն ել կմեծանա, ու մի տարուց հետո, յերբ մեծ քաղաքի մոտ ձիարշավ կկազմակերպեն, հայրն ու Կարմշակը կզնան մեծ քաղաքը: Կարմշակն ու ձին կմասնակցեն ձիարշավին: Շատ կիրգիզ յերեխաներ կմասնակցեն ու իննսուն

վերստ ձի կըշեն: Բայց ամենալավ ձիավորը
Կարմշակը կիխի ու ամենաարագ ձին—նրա ձին:
Այն ժամանակ Կարմշակը բոլորից առաջ կդնա,
նվեր կտանա ու կհարստանա:

Դա առաջ եր: Կարմշակն արդեն մեծացել
է, նա տասներկու տարեկան ե, բայց հայրն ու
մայրը մեռան, վոչ ուրթ ունի և վոչ ձի: Ինչ
վոր պարտքի տեղ Քելթի բայը բոլորը հափշտա-
կեց, իրեն՝ Կարմշակին ել իր հովիվը դարձրեց:

Այդպես որն անցնում եր: Կարմշակը կամ
պատում եր հոտի շուրջը, վորպեսզի տաքանա,
կամ նորից նստում եր ծեր արզայի ձյուղին,
հիշում եր և ցնորում: Հիշում ե, հիշում և նըն-
ջում: Մտքերը խոնվում են նրա քնած ուղե-
զում: Նա կիսաքուն լսում ե իր հոր ու մոր
ձայնը, բարձրաձայն խրխնջում ե իր հոր քու-
ռակը... ու ինչ տարորինակ ե խրխնջում, կար-
ծես գառան վողորմելի ձայն լինի: Ու հանկարծ
մոնչաց, գոռաց, հաջեց, ինչպես վախեցած շուն:
Այստեղ Կարմշակն սթափիվց: Մթնում եր. կա-
պույտ ստվերն ընկել եր հովաի ձյուներին, լեռ-
ների գագաթները վառվում ելին: Վոչխարները
դողալով հավաքվել, խմբվել ելին: Բըդոտ գամփ-
ուը, Կարմշակին կպած, ճղոցով հաջում եր:
Կարմշակը վեր թռչելով, տեսավ իրենից հեռու
անտառի մոտ տրորված ձյունի վրա արյունի

հետժ. գազանի արյունլվա խոշոր հետքը անցնում
եր արզայի կիտված արմատների վրալով: Կար-
մշակը վեր թռավ, հառաջ հարձակվեց, շան
նման հոտոտելով: Ու հասկացավ ամեն ինչ:

Քնի մեջ նա վոչ թե ձիու խրխնջոց եր լսել,
այլ դա վոչխարներն ելին մայում, շունն եր հա-
ջում, ու քաղցած գայլի բերանն ընկած գառն
եր վողորմելի կերպով մկում:

Յերեկոյան Կարմշակին ծեծեց ինքը բայը:
Թեթև դամշով (մտրակով) այնքան ծեծեց, վոր
արյուն յեկավ. հետո ականջներիցը բռնած քարշ
տվեց: Նշան գրած, լավ գառը—քնել, գայլին եր
տվել անպիտան հովիվը:

Կարմշակը ծեծվելուց հետո գնաց փարախը
ձիաների մոտ: Կավե սառը պատի տակ կուչ յե-
կավ, ու պոկված ականջին ձեռք տալով, նա
կրկին տեսնում եր բայի կարմիր դեմքը, նեղ,
սպիտակ մուրուքը: Լսում եր ճղճղան հայհոյանք-
ները և փնչոցը, վոր նման եր վալրենի խոզի
փնչոցի: Ու հանկարծ վճռեց. «կփախչեմ, կգը-
նամ»: Ինչի՞ ապրեմ ուրիշի ուրթում, արածեց-
նեմ ուրիշի անասունները: Մթթե լավ բան կա-
րելի յե սպասել այդ չար ու պառավ արջից—
բայից: Յերբ Կարմշակին իր մոտ վերցրեց, տա-
րեկան մի այծ խոստացավ: Ո՞ւր և տված այծը:
Իր յերկու տարվա աշխատանքի ժամանակ Կար-

մշակը նրա վոչ բուրդն եւ տեսել, վոչ կաթը։
«Կինամ», վճռեց նա հաստատապես։

Յեկավ ամառը։ Լեռների ձյունը հալվեց, չով-
տի սառուցն անհետացավ, նոր խոտ դուրս յե-
կավ, ծաղկեցին կարմիր ու գեղին կակաչնե-
րը։ Կարմշակը Հաջի Քելթի ամբողջ ընտանիքի
հետ ամառը բարձրացավ Ալայան հովիտը։ Ա-
լայան հովիտը մեծ եւ ու լայն։ Գարնանը (իսկ
լեռներում գարունն ուշ եւ սկսվում) հարլուրա-
վոր լեռնցի կիրգիզներ լեռների միջով անցնում
են Ալայան հովիտը։ Բարձրանում են իրենց բո-
լոր հոտերով։ Ծալոտած վրանները, սպիտակ ու
գորշ թաղիքները, ամեն տեսակ բարիքի բեռնե-
րը բարձում են ուղտերին, կուտաններին ու
ձիերին։ Մարդիկ գնում են ձիով, յերկու, յե-
րեք հոգով կուտասի վրա նստած, վոմանք ել
վոտքով։ Յերիտասարդները—բարձր ձգում են ի-
րենց յերգերը։ Լեռնային նեղ արահետով իրար
յետևից շարք են ընկնում մարդիկ ու անասուն-
ները, գնում են, անցնում մի քանի բարձր լեռ-
նաշղթաններից, մինչև վոր նրանց առջև բացվում
ե Ալայան հովիտը։ Մյուս կողմից հովիտը շըր-
ջափակում ե բարձր, մշտական ձյունով ծածկ-
ված Անդրալայան լեռնաշղթան։ Դա հովիտը
բաժանում ե մոալ, դժվարամատչելի Պամիր
լեռնային յերկրից։

Հովտում ծառեր չկան, միայն խիտ ու հյու-
թալի խոտ—ամենալավ կերը ձմեռը կիրգիզնե-
րի քաղցած մնացած անասունների համար։ Կա-
վե հուն ունենալուց—կարմիր, լայն գետի ափին.
քոչքորներն իջեցնում են ուղտերի բեռները,
վրան են խփում... Անասուններն ագահությամբ
արածում են խիտ խոտը։ Վոչ մի տեղ այնպի-
սի ող, այնպիսի թարմ քամի ու խոտ չկա, ինչ-
պես Ալայում։ Կարմշակը սիրում ե Ալայը, բայց
գնալու, բայից փախչելու միտքը նրան յերեք
հանգիստ չի տալիս։

Կարմշակն ալստեղ ել շատ աշխատանք ունի։
Ուրթերը յերկու շաբաթից ավելի չեն մնում
նույն տեղը։

Յերբ անասունները շըջակալքի կերը արա-
ծում, վերջացնում են, պետք ե հառաջ շարժ-
վել, դեպի նոր արոտատեղիներ։ Հեռու չեն գը-
նալու, 3—4 վերստ, բայց յերկու որվա աշխա-
տանք ե դա։ Պետք ե նորից քանդել, ծալել
վրանները, բոլորը հավաքել, բարձել ուղտերին...
ամենաղժվարը ձիերին բռնելն ե։ Լիառատ կեր-
պով Ալայան պինդ խոտն ուտելով, ձիերը մի
տեսակ կարծես հարբում են։ Վայրենի կերպով
խրիսնջում են, քիթներն ուղցնում, վազվզում
ամեն կողմ և մարդու ձեռք չեն ընկնում։ Իսկ

բայը, քուռակները չհաշված, մի քանի տաս-
նյակ ձի ունի: Հեշտ ե նրանց բռնելը:

— Զա, հեյ, հեյ,— վայրենի աղաղակներովնրանց
լետեից են ընկնում կարմշակը, ծառաներն ու
տանտիրոջ վորդիները: Պետք ե ձիու առաջը
տալ և ձիու մազից շինած թուկն այնպես ճար-
պիկ շպրտել, վոր ձին ողակի մեջն ընկնի. հետո
պետք ե նրան պահել ու ամրացնել բրին, մին-
չև վոր հանգստանա: Բայց պատահում ե, վոր
թուկը գցում են և ելի լետեիցն ընկնում և կան-
չում: Վորպեսզի հեշտ լինի լետեիցը հասնել,
կարմշակն ու մյուս տղերը թուչում են՝ արդեն
բռնած քուռակներին ու կուտաներին և ստի-
պում են քառասմբակ ուանալ: Աղջիկներն ել են
ոդնում:

Տղաներից ավելի վատ ճճղալով, արևի տուկ
իրենց կարմիր շորերը փայլեցնելով, մանր հյու-
սած ծամերի ծալրերը շարժելով, նրանք ել են
բռնում կուտաներին ու քուռակներին: Վերջա-
պես քշում են բոլորին ու նորից հառաջ շարժ-
վում, բեռները նորից իջեցնում և նորից վրան-
ներ խփում: Բայի կինը, աղջիկներն ու հարսը
ամառը պաշար են պատրաստում ձմեռվա հա-
մար: — կովերի ու կուտաների կաթից լուղ են
պատրաստում, վոչխարի պանիր—դոռութ են

շինում և արևի տակ չորացնում, մատակների
կաթից կումիս են պատրաստում:

Թել են մանում և ինքնաշեն դազգայահների
վրա մահուդ են գործում, վոչխարների բըդից
թաղիք են գցում: Կարմշակն ամեն տեղ պետք
է: Այս ե բերում, այնտեղ ե ոդնում: Միայն
բայն ու ավագ վորդիներն են հանգստանում:
Զի քշելով զբունում են մի բինալից մյուսը—
հովտի միջով, և փայտե, մեծ ամաններից ան-
վերջ կումիս են դատարկում:

Հաճախ բայի մոտ հյուրեր ելին գալիս: — ու-
րիշ բայեր, մոլլաններ, լերբեմն սարերի այն
կողմից՝ ուռւսներ: Այն ժամանակ ուրթում խըն-
ջուց ե լինում: Վոչխար են մորթում, շուրպա—
արգանակ են լեփում, շատ կումիս ու թեյ են
խմում: Հյուրերի ճաշելուց հետո կարմշակը լե-
ռանդով ծծում ե վոչխարի վոսկրները ու շա-
րունակ մտածում ե — «կգնամ»:

Մի անգամ, լերը մի աղատ ժամի կարմշակը
նստած եր գետի ափին, տեսավ, վոր մի տղա
ծիծաղելով դեպի իրեն ե գալիս: Տղայի կոր
դեմքն ուրախ եր, իսկ գլխին նոր արախչին
(գլխարկի տեսակը) կար: Նրա հագին ոռւսական
վերնաշապիկ կար: Կարմշակը ճանաչեց նրան:
Դա բայզուկն եր — հարևան առւլից (գյուղից) մի

չքավոր մարդու վորդի: Նրանց առւն ել Ալայ եր
սար յեկել:

Բայզուկը ծալապատիկ նստեց Կարմշակի կող-
քին և սկսեցին խոսել: Անցած աշնանից Կար-
մշակը նրան չեր տեսել: Զարմանալի ու տարո-
րինակ բաներ պատմեց Բայզուկը Կարմշակին:
Այդպիսի հրաշքներ ով և իմանում միայն հին
յերգերում են ասվում: Ահա ինչ պատմեց նա:

Ալայից յերեք որվա ճանապարհի վրա, իսկ
ձմեռանոցներից յերկու որվա ճանապարհ հեռու
մի մեծ դշաղ (գյուղ) կա—Բուզզա անունով:

Բուլզայում տները քարից են: Այդ տները
ուռւներն են շինել: Բայզկիկները յերբ վոր
Բուլզա յեկան, վերցրին մի մեծ, քարե տուն, և
կիրգիզ յերեխաներին տվեցին: Այժմ այդ տունը
կոչվում է գիշերոթիկ դպրոց: Այստեղ բազմա-
թիվ կիրգիզ յերեխաներ են ապրում: Բոլորն
աղջատ են և վոչինչ չեն վճարում: Ամեն որ
նրանք փլավ ու շուրպա յեն ուտում, թեյ ևսում:
Բնում են վոչ թե թաղիքների վրա, այլ փա-
փուկ ներքնակների, ոռւսական շորեր են ստա-
նում: Այստեղ վոչ-վորի չեն ծեծում. թուզ են
տալիս վազել, խաղալ ու բոլորին սովորեցնում
են: Ոռւսուցիչները ոռւսներ և ուսում առած
կիրգիզներ են: Բոլորը գրել, կարդալ են սովո-
րում և ամեն որ շատ նոր բան են իմանում: Ավելի

շատ և ավելի լավ, քան թե մոլան: Սովորեց-
նում են լենինի մասին: Կարմշակը լավ չհաս-
կացավ, թե ով եր լենինը չլիներ, են հրաշալի տունն
ել չեր լինի, իսկ այժմ ինքը Կարմշակն ել կա-
րող ե ապրել այստեղ: Ու Կարմշակը մտածեց,
«պետք ե գնալ այդ գիշերոթիկ դպրոցը»:

Ամառը վերջանում եր: Լեռնային արտերում
դարին հասել եր: Հաջի Քելթը ձմեռանոցների
մոտ մեծ դաշտեր ուներ, վոր գարնանը ցանել
ելին: Այժմ ծառաներն ու Քելթի վորդիներից
մեկը պատրաստվում ելին ձմեռանոցները գնալ
հունձ անելու: Կարմշակին ել հետները տարան:
Կարմշակը վաղուց եր սպասում ննձի դժվար ժա-
մանակին: Կիզիչ արեի տակ մի որ աշխատելուց
հետո, հենց վոր մթնեց, նա սուր մանգաղը
շպրտեց գարու մեջ և շուրջը նայելով, գնաց:
Նա գիտեր, վոր Բայզուկի հալրն արդեն իր վրանը
Ալայից ձմեռանոցն ե փոխադրել, վորովհետև նա
ծառաներ չուներ, վոր ուղարկեր իր արտը հըն-
ձելու: Վոչ վոր չնկատեց նրա բացակայությու-
նը: Իսկ առավոտը Կարմշակը նստած եր Բայ-
զուկենց վրանի մոտ և դուռըթը ծամելով,
պատմում եր Բայզուկին ու Բայզուկի հորը, թե

ինչու յե հեռացել բայից։ Նրանք լսում և գլուխուները շարժում ելին։ Մի շաբաթից հետո հաջիթելթը ձին քշելով մոտեցավ Բայզուկի հոր վրանին։ Լեռներում լուրը լեռնային այծից արագ եթոշում։ Բայը մարդկանցից իմացավ, վոր փախած հովիվը թագնվում ե Բայզուկի հոր վրանում։ Հաջին սպիտակ ձին հեծած յեկավ։ Նրա դեմքը կավի նման կարմիր եր, արխալուղի վրայից յերեք գուշնի կտորե գոտի յեր կապել։ Մտրակը ձեռքին սեղմած, բայը վրանի մոտ ձիուց իջավ և ծանր նստեց ոջախի մոտ։ Տանտերը խոնարհ գլուխ տվեց հարուստ հյուրին և փայտեամանով կումիս մատուցեց։ Բայը խմեց և իր չարությունը զսպելով, խոսեց գործի մասին։ Կարմշակը վրանի յետեից լսում եր։

— Իմ փախած հովին յետ տուր ինձ, — ասաց բայը, — ինչու յես պահում նրան։

— Յես նրան չեմ թագցըել, հաջի, — պատասխանեց Բայզուկի հայը, — նա ինքն ե յեկել և ուզում ե Բուլզա գնալ, դպրոցը, — ուր սովորում ե իմ վորդին։ Դա լավ դպրոց ե, իսկ յեթե ուզում ե նորից քեզ մոտ գալ, տար նրան, բայ։

Նա կանչեց Կարմշակին ու հարցըեց, թե չի ուզում արգուք կրկին բայի մոտ գնալ։ Բայց Կարմշակը հաստատ պատասխանեց, վոր «վ՞չ»։

Այս ժամանակ Բայզուկի հայըը դարձավ բային ու ասաց։

— Հաջի, դու ուժով նրան տանել չես կարող. այժմ եղախիսի որենք չկա։ Հիշիր, հաջի, վոր յես գիտեմ, թե դու նրան յերկու տարի վոչինչ չես գձարել, ու Բուլզան ել այստեղից հեռու չե։


Բայը չմոնչաց, չհայիուց։ Միայն ատամների արանքից ասաց. «յերախտամոռ գալի ճնշտ»։

Բարկությունը զսպելով, ձին նստեց ու քշեց։ Առավոտը կարմշակն ու Բայզուկը շուտով գնացին գիշերոթիկ դպրոցը։

Արդեն մեկ ու կես տարի յե՝ Կարմշակն ապրում ե դպրոցի սպիտակ տանը։ Նա սովորում է կիրգիզերեն գրել, կարդալ և ելի ուրիշ շատ բան, վոր մոլլան չգիտե։ Նա մարզանք ե անում, աշխատում ե բանջարանոցում, մյուս յերեխաների հետ ուրդա (խաղի մի տեսակն ե) յե խաղում։ Նա ուրիշ շատ գործեր ել ունի, վորովհետեւ քիչ առաջ Կարմշակը պիոներ դարձավ և կարմիր վզկապ կապեց։ Նա այժմ լավ գիտե, թե ով եր լենինը։ Կարմշակը լավ ե սովորում և մի կամ յերկու տարուց հետո նրան Ոշի կուրսերը կուշարկեն։ Յերբեմն, յերբ բոլորը պառկում են, Կարմշակը յերկար ժամանակ պահպում ե իր

անկողնում։ Կարմշակը մտածում է.—կուրսերն ավարտելուց հետո կգնա Մոսկվա ու ենտեղ ել կոռվորի։ Իսկ յերբ ամեն բան կոռվորի, կվերադառնա լեռները։

Նա այնպես կանի, վոր բոլոր բայերը, վորոնք գեռ մնացել են, գնան, կորչեն Ալայան լեռներից։



3127

656 УАКИ

Գիրք Ե 5 կ. 1 և. (Մաս.)

32

1
2



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Н. Делигенская
АЛАЙСКИЙ ПАСТУХ
Госиздат ССР Армении
Эривань, 1930 г.
